

ու թող տալոր բիւրեղանայ : Այս տակառները թէ փայտէ կրնան շինուիլ , թէ պղնձէ . լայնութիւննին գրեթէ 2 ոտք է , և բարձրութիւննին մէկ ու կէս ոտք . տակը ծակ է , բայց սունկով գոցուած . յատակին մօտ ալխողովակ մը կայ որ տկար ջուրը վաղցընելու համար է . յատակէն 4 բթաշափ վեր չորս կամ վեց հատ հորիզոնական գաւազաններ հաստատուած են , նոյնչափ գաւազաններ ալ կան ջրին երեսէն երկու բթաշափ վար . բորակին առջի բիւրեղները ան գաւազաններուն կը կպչին , և ասոնք ամենէն աղէկը կը սեպուին : Խրբոր ջրին բոլոր բորակային մասունքը կը բիւրեղանան , կը ժողվեն զանոնք ու արեւու կամ փուան մէջ չորցընելով՝ պղտի տակառներու մէջ կը դնեն ու կը ծախեն :

Այս կերպով շինուած բորակները թէպէտև բաւական մաքուր կ'ըլլան , բայց օտար նիւթեր միշտ պակաս չէ մէջերնին . անոր համար թէ որ կ'ուզես աւելի զտել , պէտք է որ ան բիւրեղացած բորակը առնես , մզած տակառին տակը մնացած տաք ջրովը նորէն անիկայ լուծես , ու թողուս որ պաղի . երբոր պաղելու ատեն օտար աղերը տակը նստելով կը բիւրեղանան , ան ատեն տակի ծակը բաց , ու մնացած մաքուր ջուրը ուրիշ ամանի մէջ անցուր , ու վերի ըսածներս նորէն ըրէ : Այսպէս երկու անգամ եփելով՝ առջինէն շատ մաքուր բորակ մը կրնաս ունենալ . իսկ թէ որ շատ անգամեփես ու բիւրեղացընես , բորակը ամենազուտ կ'ըլլայ , և շատ բանի կը գործածուի :

ՕԳՏԱԿԱՐ ԳԻՒՏԵՐ

Հաւաքինը երկայն առեն պահելու հնարք :

ԴԻՆՈՒ քարողիչները իրենց գլխաւորին որ Պաղղիա կը նստի՝ անանկ

թարմբագի հաւկիթներ խաւրեր են որ կարծես թէ նոր ածուած են եղեր : Այս է եղեր պահելուն կերպը . տասը հաւկրթի համար առ կէս լիտր նոձիի կամբակլայի մոխիր . (ոմանք աս մոխիրին տեղը փոթաս կը գործածեն .) անոր ութը մաս բաժնածին իրեքին չափ փոշի գարձած կիր , երկու ունկի ալ հասարակ աղ՝ նոյնպէս ծեծած . ետքը շատ մը չայ առ , ջրի մէջ քանի մը օր թրջոց գիր , ու ան ջրով վերի նիւթերը շաղուէ . ան զանգուածով պատէ հաւկիթները մէկ երկու գծաշափ հաստութեամբ , ետքը հողէ ամանի մը մէջ գիր ու ամանին բերանը ամուր մը գոցէ :

ՎՃԷ ՊԱՐՈՒԷԼԻ ՆՅԱՆՆԵՐ :

Այս տզրուկն որ շուտ կը ծակէ , շատ արիւն կը ծծէ ու երկայն ատեն կրնայ պահուիլ , քիչ մը տափակ կ'ըլլայ . կոնակը գլխէն ինչուան պոչը չորս գիծ կ'ունենայ , որոնք մարմինը իրեք հաւասար մաս կը բաժնեն . աս չորս գծերուն երկուքը , որ տզրուկին երկու կողերուն վրայ են , բոլորովին դեղին պիտի ըլլան . կոնըկին վրայի երկու գիծն ալ դեղին պիտի ըլլայ , բայց սև բծեր պիտի ունենայ . պոչին կողմերը մոխրագոյն ու սևկակ փայլուն գոյն մը պիտի ունենայ : Այս տզրուկն որ կոնըկին վրայ աս գծերը չունի՝ դժուար կը կպչի , քիչ արիւն կը ծծէ , ու խիստ քիչ ատեն կրնայ պահուիլ :

ԴԱՐՊԵ ՏՈՂՔԱՄՈՒ ՆՅԱՆԿՐԵՆԵԼ :

ՀԱՒԱՍԱՐ չափով առ կնդրուկ ² ու հերձի խէժ ³ . ասոնք զատ զատ դիր ապակէ կամ կապարէ ամաններու մէջ , ու վրանին գինիի ոգիք կամ ալ-

քոռվ՝ այսինքն զօրաւոր օղի լեցընելով
կամաց կամաց տաքցու , ինչուան որ
խէժերը հալին : Յետոյ կրակէն մէկ-
դի առ , ու թող որ քիչ մը հանգչին .
ետքը մէկտեղ խառնէ զանոնք : Ա-
սիկայ գործածելու ատեն 7 կամ 8
աստիճան տաքցուր , ու ձարպէ մո-

մերդ ասոր մէջ թաթիւէ 5 կամ 10
մանրերկրորդ , և յետոյ զգուշու-
թեամբ չորցուր : Այսպարզ գործողու-
թեամբս ձարպէ մոմերը մեղրամոմի
ամէն աղէկ յատկութիւնները կ'ու-
նենան :

ԲԱՆԱՍՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ



Չինու և մէ պարփապը :

ԱՇԽԱՐՀՔԻՍ ՀՐԱՉԱԼԻ ՄԵԾԱԳՈՐ-
ԾՈՒԹԵԱՆՑ մէկն ալ Չինու պարփապն
է , որ հաստ պատ մըն է՝ Չինու եր-
կրին բոլոր հիւսիսային սահմանը քա-
շած , և ասով կը բաժնուի թաթար-
ստանը Չինէն : Այսպարսպին երկայ-
նութիւնը գրեթէ 1500 մղոն է . իսկ
բարձրութիւնը տեղ տեղ 20 , տեղ
տեղ ալ ինչուան 25 անգղիական ոտ-
նաչափ է . հաստութիւնը 15 : Ամէն

հարիւր կանգուն հեռաւորութեանը
մէջ աշտարակներ շինուած են , ամէն
մէկը 48 ոտնաչափ բարձրութեամբ :
Պարսպին քաշուած երկիրը լեռնային
անթեր ու ապառաժ է , այնպէս որ
տեղ տեղ՝ բարձր ժայռերու վրայ՝ ծո-
վուն երեսէն ինչուան 600 ոտք բար-
ձրութիւն ունի : () ձապտոյտ երկայ-
նութեամբ մը շինուած է պարփապը
ոչ միայն լեռներու վրայ , այլ նաև ձո-